Մամլո հաղորդագրություն 29 սեպտեմբերի, 2004 թ.

Կանխել Մելգոնեանի փակումը

Հոկտեմբերի 1 -8-ը Երևանում, Մարիոթ Արմենիա Հյուրանոցում, տեղի է ունենալու ՀԲԸՄ Գլխավոր Համագումարը: Մեր խնդիրն է այս համագումարում բարձրացնել Մելգոնեան Կրթական Հաստատութեան (ՄԿՀ) փակման հարցը, որի տխրառչակ որոշումը կայացվել է ՀԲԸՄ-ի Կենտրոնական Վարչության (ԿՎ) կողմից՝ 2004 թվականի մարտի 16-ին: Ըստ այդ որոշման դադարեցվում է 78 տարվա պատմություն ունեցող այս հաստատության կյանքը: ՄԿՀ-ի փակումը նշանակում է Հայ ազգի մի փոքրիկ մասնիկի կորուստ և խախտում է Կարապետ Մելգոնեանի Կտակը (1925):

ՀԲԸՄ ԿՎ-ի հայության նկատմամբ արհամարհական և քմահաճ
այս վերաբերմունքը արդեն բազմիցս դատապարտվել է Հայկական մամուլի, մի շարք կազմակերպությունների և կուսակցությունների, Կիպրական կառավարության, ինչպես նաև նույն իր՝ ՀԲԸՄ անդամների կողմից: Դեռ վերջերս Բելգիայի ՀԲԸՄ նախագահը որպես բողոքի նշան հրաժարվեց իր պաշտոնավարումից: ՀԲԸՄ-ը Շվեցարիայի մասնաճյուղը հունիս ամսվա իր հայտարարությամբ դատապարտեց այս որոշումը: Հայկական մամուլի հրապարակումներից արդեն հայտնի են ՀԲԸՄ ԿՎ-ի նախագահ Պերճ Սեդրակյանի Երևանյան աննախանձելի մամլո ասուլիսի մանրամասները, որտեղ նա այդպես էլ չկարողացավ հիմնավորել ՄԿՀ փակման իր
անհասկանալի գաղարափախոսությունը:

Անկասկած Մելգոնեանը ամենակարևոր և ամենահայտնի հայկական դպրոցն է աշխահում: Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը երբևէ չի ձախողվել կամ դադարել իր առաքելությունը կատարելուց: ՄԿՀ-ն տվել է հայկական համայնքների առաջնորդներ, մտավորականներ, ուսուցիչներ, ակադեմիկներ, բժիշկներ, արվեստագետներ, պետական ծառայողներ, մասնագետներ և Սփյուռքի մարտիկների մի անվերջ բազմություն:

Հուսով ենք, որ ՀԲԸՄ Գլխավոր Համագումարի պատվիրակները վճռականություն կունենան կատարելու ճշգրիտ որոշում և չեղյալ կհայտարարեն ՀԲԸՄ ԿՎ-ի ՄԿՀ-ի փակման որոշումը:

Մենք օգնության կոչ ենք անում համայն հայությանը: Սա արդեն Համահայկական հարց է:

Հարգանքներով՝

Մելգոնեանցի Ինտեռնացիոնալ
Համակարգող Հանձնախումբ
www.SaveMelkonian.org
admin@savemelkonian.org